

Մովսես Դուկանյան

12816

Գեղարքունիք - Զայտ

891.99

Հ - 95

Ալեքսանդրով  
1914

1914 № 2045

ՄՊՎԵՍ ԴՐԱԿԱՆԻՑ


ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԻՆՍԻՏՈՒԹԱ  
ՅՈՒՆԻՑԻՑԻ  
Ակադեմիա Խավ  
ՍՍՀ

(53)

# ԳԵԱԼԻՒՆ-ՂԱՅԱ

ԼԵԳԵՆԴԱ

Գինն է 5 կոշ.



2003

Ալեքսանդրապոլ, տու, Ա. Մալխասեանցի

1914

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱԴՐԵՆԱԼԻՆ  
ԱԿADEMİCİ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԱԱԿ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿADEMİCİ

ԱՐԺԱՐԱՎՈՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԱԱԿ



6005

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿADEMİCİ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱԱԿ

արմ  
6072

## ՄՈՎՍԵՍ ՂՈՒԿԱՍԻՆ

891.99

2-95

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԻНSTITUTA  
ՅՈՒՆՈՒՅԵՆԻ  
Ակադեմիա Նաւ  
СССР

## ԳԵՎԱԼԻՆ-ՂԱՅԱ

ԼԵԳԵՆԴԱ

Խ-51202



Ալեքսանդրապոլ, տպ. Ա. Մալխասեանցի

1914

# ԳԵԱԼԻՆ-ՂԱՅԱ

(ԼԵԳԵՆԴԱ)

Հանգստցեալ Վ.Ռ.Օ.Մ.

ԲԿԱՅ.ՑԵԽԱՆ.Վ.Ն.Ի յիշաւակին

Սարի սուր ծայրին մի քար կայ միայն  
Հնուց մնացած գիրեզման է այն,  
Միշտ Գեալին-Ղայէն սպում է լոիկ,  
Իւր հարազատին հին վազամեռիկ:  
Երբեմն սարը ցնծագին, ուրախ  
Ապրում էր անհոգ առանց ախ ու վախու  
Ինքը մի սար է զիրքով գովանի,  
Առթափա գիւղն էլ կրծքին անւանի:  
Երբ լուսաբացին մութն էր հեռանում,  
Լերան ջուրի մէջ ծուրին էր ծառանում.  
Արև ծագելիս տեսնում էր լիք-լիք,  
Անհոգ գիւղացուն կեանքի խաղալիք:  
Այդ գիւղն էր միայն Գեալին-Ղայէն փառք  
Անունին գովիստ ու զիրքին պարծանիք:  
Ամեն առաւօտ ջրի կուժն ուսին,  
Նոր հարսն ամօթիսած ալ քողն երեսին,  
Գնում էր աղբիւը ու եայլի կանչում,  
Մի մարդ տեսնելիս, լուում ամաչում:  
Ամեն առաւօտ հարս ու աղջիկներ,  
Խմբի բաժանտած հասակու լնկեր,  
Կանաչ սարերին գնում ման գալու,  
Թաւուտ լանջերին պարել ծափ-տափուր  
Ամեն առաւօտ Կարօն անմոռաց,

50413 - ար



36180-66

Որսի էր գնում շտապ քրտնած.  
Նա միշտ սիրում էր վաղ արշալոյսին,  
Զինւած մանզպալու հրացանն ուսին,  
Ամեն առաւօտ և դեռ ծէգէ ծէզ,  
Քահանան հնչում վաղորդեան ժամերգ,  
Ամեն առաւօտ սարեակ, ծիծեռնակ,  
Արտուր, կաչաղակ, սիրուն աղաւնեակ,  
Բնութեան երգը ձխիում յօրինում,  
Հետն էլ ձագերին բներ են շինում:  
Գարնան առաւօտ գիւղացին կերթար,  
Սերմը շալակին եկնով արտավար.  
Գութանն իր գործին, մաճկալը մաճին,  
Կոշտ ձեռքը զրած աջու ականջին,  
Բարձր գոսում էր «հոսովէլ, հօտաղ,  
Հայ տուր եկներիդ, արկիդ մատաղ»:  
Ամեն առաւօտ բեռներով սայլակ,  
Սարից ցած գալով կանզնում դէղի տակ:  
Սայլը ճուալով ճմլում ճոնչում,  
Եղն էլ լծի տակ տնքում մոնչում,  
Ամեն առաւօտ ոչխար ու տաւար,  
Թևարձակ կերթար ծաղիկ կոխ կուտար.  
Եղն ու եզնարած հօտաղ հորթարած,  
Տաւար ու նախիր, չորան գառնարած.  
Հացը պարկի մէջ կապած քամակին,  
Սրոտ կերթային մեծ լերան տակին:  
Ամրան առաւօտ սուլում էր զեփիւռ,  
Հեղի արտերին ծումուռմ էր լուռ,  
Հանզպարտ խշունով կանէր տարուբեր,  
Որպէս համբուրւող կարօտ ընկերներ,  
Իրկուն առաւօտ բողարն էր հաչում,

Արլորն իր ժամին կէս գիշեր կանչում:  
Գեալին-Ղայէն ուրախ ազատ,  
Սիրաը բաց ու ծիծաղկոտ՝  
Ծաղիկ ծլող մայր հարազատ,  
Համ ջուրն համով համ ծաղկոտ:  
Ամեն ծմակ մի աղբիւր կար,  
Ամեն քարին փունջ ծաղիկ,  
Վարար կելնէր ու ջուր կուտար,  
Խամբուկ ծաղկանց շարմաղիկ:  
Որեծագին մամուռ թաւար,  
Գոհար յակինթ շաղն ու ցող,  
Պտուղ-պտուղ կըհուր-հուրար,  
Ծաղին, շողին որսկան կարօն,  
Մարում որսի ման կուզար,  
Նա չըգիտէր կիւրակին—տօն,  
Երեկոյեան տոն կուզար:  
Նա հերոսն էր Գեալին-Ղայի,  
Եւ սիրում էր սար ու ձոր,  
Եւ ծանօթ չէր ախ ու վայի,  
Որսով կապրէր փառաւոր:  
Որսի մսով պահում կնոջ,  
Ու հազցնում մետաքս-խաս,  
Ոիրով պաշտում իւր ընկերոջ.  
Եւ չէր թողնում բան պակաս:  
Միշտ յիշում էր իւր սիրելուն  
Ամեն վայրկեան ամեն ժամ,  
Ու կանչում էր զով օրերուն  
«Եկ որս անենք Զարօ ջան...»  
Գիւղը ապրաւ մի ժամանակ.

Աւրախ. ծիծաղ տնաշէն.  
 Մի օր հարսնիք, մի օր հանաք,  
 երդ ու պարի խառը ձէն:  
 Հարս ու աղջիկ նրանց միջին,  
 Ոսկի արծաթ զարդերով,  
 Թէկուզ հասած աշնան վերջին,  
 Ման են գալիս վարդերով,  
 Այդ բախտաւոր կեանքը անցաւ,  
 Հասաւ օրը մեծ սուզի,  
 Ուրախ կեանքը դարդ յղացաւ,  
 Հովը փչեց սառ բռչի,  
 Են Առթափէն տունն էր հայի,  
 Օրօրանը դարէց դար՝  
 Եւ անծանօթ ողբ ու վայի,  
 Էս էլ տեսաւ չարչար:  
 Մի մութ գիշեր, վէրան գիշեր,  
 Փչեց խորշակ չար սամուն,  
 Հետը բերեց ինչպէս փըշեր,  
 Պարսկաստանից հարամուն:  
 Հորդան եկաւ մօտ թմբերէն,  
 Շուն ու չորան ձէն առին,  
 Դեռ չհասած գեղի վրէն,  
 Կարօն հեծաւ նժոյդ ձին:  
 Զինւած թռաւ որպէս կայծակ,  
 Գնաց հասաւ հաւարին,  
 Կարկուտ թափեց բոց ու կրակ,  
 Որնի ծարաւ գուշմանին:  
 Դուռ գրացի գեռ խոր քնած,  
 Զիլ որստին գուրս թափան:  
 Յանկարծ տեսան գեղն է բռնած,

Ահից փախան ցիր ու ցան:  
 Զարօն արագ քաշեց իր ձին,  
 Ու քաջի պէս նա թռաւ,  
 Երիվարի մերկ քամակին,  
 Կուի համար թև առաւ:  
 Նա սլացաւ մարտի ձէնին,  
 Օգնեց անվախ քաջ սրտով,  
 Կարճ միջոցում գլորաւ ձին,  
 Կրծքից խփին գնդակով:  
 Ճարպիկ Զարօն ոտքով փախաւ,  
 Հասաւ սարի կատարին:  
 Սիրտը թոթիս քրտնաթաթաւ,  
 Համ մութ գիշեր, համ սարին.  
 Նա գալարւեց ինքնամոռաց,  
 Պտոյտ տևեց վայր ու վեր,  
 Եւ սարսափից ուժգին գոռաց,  
 Որոտացին ողջ սարեր:  
 Մարդն իմացաւ կնոջ սուր ձայն,  
 Ու ցնցւեց վարանած—  
 —Ընկեր թողած տատրակն է այն,  
 Ինձ է կանչում գագաղած:  
 Կարօն ընկաւ կրակի մէջ,—  
 Կնոջ հանէր, թէ կուին,  
 Թէ ձեսը լւար, կուին տար վերջ,  
 Գնար պաշտած ընկերին:  
 Գնալ, զնւը էր, սուրը շողաց.  
 Մշակը մէկ՝ հունձն առատ,  
 Ու գուշմանը ահից գողաց,  
 Դեռ հնձում էր անընդհատ:  
 Կրանք երդւան, «Թորվաթ, Կուրան,

էլ Մուհամմէտ, էլ Ալի,  
 Բոնեն հային ողջամբ կուլ տան,  
 Վրայ հասան սրտալի  
 Մոլեգնած կրակ թափին,  
 Կուտան անվախ ու սրտող,  
 Դնդակ դիպաւ վայր ընկաւ ձին,  
 Կարօն մնաց հետիոտ:  
 Թռաւ դէպի իր կնոջ ձին,  
 Կենդանի է նա կարծեց.  
 Նա վեր կելնէր նրա ձէնին,  
 Լերան ձէրին զարկւեց:  
 Հայ հերոսի ձայնը լոեց,  
 Դուշմանը այդ հասկացաւ.  
 Նա հոտն առաւ և ըմբռնեց,  
 Թռով թռաւ գեղ հասաւ...  
 Լիրը Խան-Վալին կրակ կարած,  
 Գէլ ու գազան քամակից,  
 Շաբաթներով ճամբին սոված,  
 Կարօտ գաալ խորակից:  
 Ներս խուժեցին շէն տներում,  
 Ավալ-թափալ և սոված՝  
 Գիշերը մութ, գեղն էրէրում,  
 Ժողվն գոյքը սըփըռած:  
 Ի՞նչ որ տեսան բան չթողին,  
 Հաւաքեցին հանին դուրս,  
 Զուլ ու փալաս խաս անկողին,  
 Խլխլեցին անհամուս:  
 Մնաց գեղի ծածք ու ծվար,  
 Էն էլ աւին կրակին  
 Բոյն ու ծուխը վեր կդառնար

Փոշին կուգար յատակին:  
 Բոյը բալ-բալ — ծածքը լիզեց,  
 Գեղը մնաց աւերակ,  
 Պատ ու կոռուր հաւսար զղեց,  
 Քայլքայեցին հիմնատակ:  
 Կարօն կամաց կնոջն հասաւ,  
 Սարի բարձր կատարին,  
 Եւ յոդնատանջ թեքւեց նստաւ,  
 Աչքը զցեց տաք եարին,  
 Նա վար նայեց, գեղն է վառւում,  
 Բոյն է այրում շիկացած՝  
 Շէնն աւերում, օջախ մարտում,  
 Ցուզւած հոգով մոնչաց:  
 Քարի տակին մի շուք տեսաւ,  
 Իրան կինն էր, ճանաչեց.  
 Կինն էլ կամաց վրայ հասաւ,  
 Կարօն մեղմիկ մօտ կանչեց:  
 Կինն սթափեց տեղից թռաւ,  
 Փարւան տւեց չորս բոլոր —  
 Կարօն լոեց, Կարօն մեռաւ,  
 Զարօն մնաց գլխակոր...  
 Գմբախտ կինը չոր կարկամեց,  
 Սրտի խորքից գորխըրաւ,  
 Բոյ աչքերից արուն քամեց,  
 Կարծես կուրծքը վուլ եկաւ,  
 Անվերի սար ու մենակ կին,  
 Կոծեց մահը ամուսնուն.  
 Սիրտը մոմուս ու մոլեզին,  
 Զարկեց անվերջ իր զլխուն.  
 Մանի կանչեց, ծաղիկ փնչեց,

Քաղեց ժողւեց սարերէն,  
 Եկաւ մարդու վէրքը սրբեց,  
 Ծաղկով ծածկեց բաց եարէն:  
 Լացով կանչեց: «Ո՞րի, այ սար,  
 Բեր իմ դարդիս լաւ դարման,  
 Հովհաննիմ, եարիս փայ սար,  
 Արի ցաւիս գիր մահլամ:  
 Սարին հովեր, անուշ ամպշող,  
 Արէք ծածկէք, հով արէք,  
 Ինձ ճմլում է լացը խեղդող,  
 Առէք կեանքս ձեզ տարէք:  
 Կարօն մեռաւ, Զարօն մնաց,  
 Բնկերացիր համը քար,  
 Անգութ՝ արի քիչ ինձ հետ լաց,  
 Զէ մենակ եմ, այ անձար:  
 Սարի ծաղիկ, սիրուն ծաղիկ,  
 Կտրիճ Կարօն մոռացմը,  
 Զէ լալիս եմ օղիկ մաղիկ,  
 Անբախտ ինչու հեռացար:  
 Ել պէտքը չեն ինձ ծաղիկ տունկ,  
 Եարիս զլուխն է ձեռիս:  
 Սիրտս է միոււմ քանց անուշ խունկ,  
 Այն կըծխեմ մեռելիս:  
 Աղբաշ աղբուր, Թաղբաշ աղբուր,  
 Արի եարիս լողացուր,  
 Բախտակեց ենք բեր՝ սառը ջուր,  
 Բովսած սիրտս հովացուր:  
 Թռէք հաւքեր, լոէք հաւքեր,  
 Ինձ քար գարկին, գնացէք,  
 Թմա կոտրաւ, Ել չեմ ընկեր,

Թաէք բախտիս զառացէք:  
 Զայիր չիման, ոչ զօրանաք,  
 Ալան եարիս ինչ արիք,  
 Ես խոյս տի սարին մենակ,  
 Գլխիս բերիք ծով չարիք.,  
 Եարար Բս եմ ու գարտի տէք,  
 Թէ ինձ նման շատ մարդ կան.  
 Սև սարերին սուզ ու անտէք,  
 Առանց ազգ ու ազգական:  
 Վէրան գիշեր, գարամ գիշեր,  
 Արձիճ բեռնիք քամակիս...  
 Մարդս եկաւ բայց շատ ուշ էր.  
 Ել չափ մնաց կրակիս:  
 Առաւ, հերիք լաս կլկաս,  
 Անէծք թափես չոր ափին,  
 Մոմուռ անէծք բերիք վրաս,  
 Լամ զարկւիմ քարափին:  
 Սարը վայզեր ու ես վայզեր,  
 Տուն ու տեղս հոն վառաւ,  
 Շէն օշախս մնաց աւեր,  
 Զիւան ջանս հոս մեռաւ:  
 Անցիք, գիշեր, գայ լուսաբաց,  
 Եարիս տեսնեմ վառ կարօտ՝  
 Հալալ անեմ մեր աղ ու հաց,  
 Վէրքը լամ արիւնոտ:  
 Ամպից կտրեմ մախմուր փաթթան,  
 Լուսնթաղից թել ճարեմ,  
 Արև շողից զառ վառ պատան,  
 Նստեմ ողբամ ու կարեմ:  
 Ծոցս շիրիմ պահեմ մնայ,

Ծամերս անեմ սուզ քնար,  
 Կանչեմ անուշ հանգստանայ,  
 Դարդ նւագիմ միալար:  
 Երկինք փուլ եկ, խաւար կեանքիս,  
 Սնողոք ու անարդար.  
 Վերջ տուր ծանը տառապանքիս,  
 Հերիք տանջես չարաչար...»  
 Սև զուլումի գիշերն անցաւ,  
 Ահա մի ծեր կամացուկ,  
 Խեղճ Զարուհու մօտը կանդնաւ,  
 Որ թափում էր արտասուք...  
 Գլուխ իջուց սգաւորին,  
 Իբր պաշտպան կարեկից,  
 Եւ անարգեց նա Զարօյին,  
 Կրակ ցխաց բերանից:  
 — Ի՞նչ, անրախտ կին, ի՞նչ լաց ու թաց,  
 Էլ ի՞նչ աղու արտասուք.  
 Հայի ճակտին վաղ է զրած,  
 Զուր աղաղակ, զուր աղմուկ...  
 — Յաւս ծով է, հէջ մի խառնիր,  
 Ո՞ր կողմերից գարբէգար,  
 Քովս ծլկար, կարծի մահն էր,  
 Եալէդ բռնեմ բէխարար:  
 — Ես հոգին եմ այս լեռների,  
 Կեանք ու արև ներչնչող,  
 Ոյժն եմ ըմբռստ հայ ձեռների,  
 Դուշմանի դէմ մարտնչող:  
 Ես սիրտ տւի, հոգի տւի,  
 Ու թափեցի ջանք և ճիգ.  
 Վահան գարձայ սուրը սրի,

Եղայ նեցուկ դօրավիկ. . .  
 Հին դարերից կայ այդ չարիք,  
 Թուրքը հային թշնամի.  
 Թուրքն անաշխատ՝ անթիւ կարիք,  
 Կպճէ հային հա տանի...  
 Լսիր, մի լար, էլի սիրտ առ,  
 Կինն աղբիւրն է նոր կեանքի,  
 Խօմ չես մնայ անվերջ թշւառ,  
 Գուցէ հասնես յարգանքի...»  
 — Եարիս գոշին գիւլլա դիպաւ,  
 Ցարգ ու պատիւ ու գրւեց.  
 Զուր խնդրեցի, կըակ թափաւ,  
 Իմ բաժինս հրդեհւեց:  
 Շէն ու շէնլիկ փախան կորան,  
 Մէն ու մենակ մնացի.  
 Սարերն ինձ հետ սգաւորան,  
 Սիրտս ձմլաւ, ողբացի:  
 Ցաւ շնտ ունեմ, ծիծ ու ծոցս  
 Աղէկտուր մրմնջում,  
 Ոտքս ծանը մատաղ կուրծքս  
 Բաբախում է ինձ տանջում:  
 Նայիր հեռնեն, ի՞նչքան թոչուն,  
 Համ ճախրում են, համ խօսում.  
 Ու խնամում, և ձագ և բոյն,  
 Խնձնից արիւն է հոսում...  
 — Ծանը ոսք ես, շառաւիդէ.  
 Պիտի ծլի բարոնակ,  
 Լացիդ վերջ տուր կուրծքդ ճղէ,  
 Տուր ինձ արու քաջ զաւակ:  
 Հետո տանեմ, սիրուն պահեմ,

Փաթթւեմ փափուկ զիպայտի,  
 Վարդի թփով գէմքը ծածկեմ,  
 Փէշս բոնեմ վրան հով ..  
 Մի օր ահսար նա զօրացաւ,  
 Հերոսի պէս քաջ-արի,  
 Թուրքը կապեց ու ձին հեծաւ,  
 Դարձաւ տիրող աշխարհի:  
 Արտասուրից շինւած պալատ,  
 Արեի տակ չի ճարւի.  
 Վեր կաց հեռու, պարտք կայ վրադ,  
 Դու այն պարտք կատարի...»  
 — Մինչև կեանքս չխորովեմ,  
 Ոտք կը ոնէ հեռանաս,  
 Անվերջ պիտ լամ ու տրորւեմ,  
 Եարիս մահը գեռահաս:  
 Շունչը մեռաւ, ոսկորը կայ,  
 Պիտ համբուրեմ նրա դին.  
 Անգութ սարին անխօս վկայ.  
 Համնի մինչ նոր սերնդին...»  
 Ծերը խօսեց պաղատագին.  
 — Նախ մանուկդ դուն ինձ տներ,  
 Որին չկայ և ոչ մի դին,  
 Յոյսն է հայի ընդհանուր:  
 Կուրծքդ քամէ, իաթդ տներ ինձ,  
 Ցամաք քամէ, շատ մաքուր.  
 Կէսը տղին կտանք կաթնից,  
 Կէսն էլ կազմէ կաթնաղուր:  
 Արտասուքդ սըբէ, թափէ,  
 Ինչ սև ունիս ժողւէ տներ,  
 Կտանք հողին, նա լլափէ,

Տակից կելնի թուխաղրուր...»  
 Կուրծքը քամէց, գէմքը սրբեց,  
 Ծոցից՝ կորդից նոր մանկան,  
 Կաթ արտասուք բուռ բուռ թափեց,  
 Ծաղկով ծածկեց երեխան:  
 — Սէբդ հրպէհ, սիրտդ հնոց,  
 Քեզ կլորւէ խորտակէ,  
 Հողն է քեզի տեղ ու ծածկոց,  
 Խնդրենք սարին՝ պարտակէ...  
 Գինն հասիր քո սիրելուն,  
 Հանգչէք մի տեղ անբաժան,  
 Միշտ կը հսկեմ անքուն արթուն,  
 Հանգստացէք յաւիտեան:  
 Տիսայ քո մէջ մաքուը պարդ սէր,  
 Եղար սիրոյ նահատակ,  
 Եւ անունդ սրբանւէր  
 Թողիր սարին յիշատակ...  
 Ու ձեր գիւղը լինի աւեր,  
 Լերան զիկին մութ մշուշ,  
 Խոպան դառնան արտ ու ափեր,  
 Ծաղկունքի տեղ ծլի փուշ:  
 Ամեն տեղից ձեր գէմ ուխտ գան,  
 Թումբ և արձան չգտնեն,  
 Կաթն աղբրից խմեն՝ գովք տան,  
 Թուխ աղբրին ծունկ ծուն:  
 Քեզնով պիտի Գեալին-Ղայէն,  
 Կոչւի յաւէտ հարսն քար՝  
 Նոր ոյժ առնի այս տղայէն,  
 Ցարատեէ դարէց դար...»  
 Ծերն ալարտեց՝ սարն յատակից

Քարը տակից գողզողաց.  
Ծարժում առաւ խոր անդունդից,  
Սարը մնաց բերան բաց:  
Ծերը մանկան հետ վերացաւ,  
Մարդուն սարը կուլ տևեց,  
Զարօն նոտած լեռ քար դարձաւ,  
Սարը սոսկաց տատանւեց:

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

1912 թ.  
Արքայի գրադարան



Հայաստանի պետական գրադարան  
Հայաստանի Հանրապետություն

Հ Յ . . . . . բաժինը (1)  
Հ Յ . . . . . ընտական մասնաշնորհ (2)



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՎՐՈՊԱ ԱՆԴԱՀԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայ 3ր 26722 ս. 6

Լոյս են տեսել նոյն նեղինակի նետե-  
եալ գրերը՝

- 1) Ալագեազ . . . . . 5 կ.  
2) Նահապետական տուն . . 5 կ.



Համեմատ

Александроволь,

Мовсесу Гукасяну

Будка у городского сада.

2013

12816

